ԱՊԱՀՈՎ, ՊԱՏՇԱՃ, ՄԱՏՉԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱՆԱԼԻՆ Է

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Աշխարհ, որտեղ յուրաքանչյուր ոք ունի պատշաճ տուն

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՏՕՈ սերն ի գործ դնելով՝ Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա (ՀՖՀ Արմենիա) հիմնադրամը միավորում է մարդկանց՝ կառուցելու տներ ու համայնքներ և սերմանելու հույս:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ցույց տալ Հիսուս Քրիստոսի սերը
Կենտրոնանալ կացարանների վրա
Իրականացնել քարոզարշավ մատչելի բնակարանների կառուցման ուղղությամբ
Խթանել արժանապատվությունն ու հույսը
Աջակցել կայուն և փոխակերպվող զարգացմանը:

Տարեկան հաշվետվություն ՖՏ 2014

1 հուլիսի, 2013 թ.- 30 հունիսի, 2014 թ.

ԱՊԱՀՈՎ, ՊԱՏՇԱՃ, ՄԱՏՉԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱՆԱԼԻՆ Է

ՀՖՀ Արմենիան 2014 ֆինանսական տարում աջակցել է 742 ընտանիքների:

2000թ. մեկնարկից ի վեր մենք օժանդակել ենք 3,470 ընտանիքների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 5

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԹՎԵՐՈՎ 6

ԳԼՈՒԽ 1: ԿԱՌՈՒՑԵԼ ՏՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ 7

Բնակարանային միկրոֆինանսավորում. բնակարանների վերանորոգում, կիսակառույցների շինարարություն և արևային էներգիայի օգտագործման խթանում 8

Բազմաբնակարան շենքեր/Համատիրությունների կարողությունների զարգացում 13

Տեխնիկական աջակցություն 17

Աղետների ռիսկի նվազեցում և արձագանքում 18

ԳԼՈՒԽ 2: ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀԵՏ 20

Գլոբալ վիլիջ 21

Մեկօրյա շինարարություն 22

ԳԼՈՒԽ 3: ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԼՈԲԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ 24

ԳԼՈՒԽ 4: ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ 29

ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ 32

ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ 32

ԶԱՐԳԱՑՈՂ ԴԻՆԱՄԻԿԱՆ 33

ՀԱՎԵԼՎԱԾ 1 34

ԱՋԱԿՑԵՔ ՄԵՋ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՏՆԵՐ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՎ ՀՈՒՅՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 35

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի Հաբիթաթ Արմենիայի ընկեր,

Մեծ ուրախությամբ ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ 2014 ֆինանսական տարում մեր ունեցած նվաճումների մասին: Տարին շատ հաջող էր Հաբիթաթ Արմենիայի համար հայ ընտանիքների կյանքի որակի վրա ունեցած ազդեցության առումով:
Այս տարվա ընթացքում Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիան ձեռք է մեկնել մոտ 742 ցածր եկամուտ ունեցող ընտանիքների: Ի հավելումն, ավելի քան 1,000 ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ ստացել են բնակարանային աջակցության ծառայություններ:
ԻՆչպես նաև, Հաբիթաթ Արմենիայի թիմը աշխատանք է տարել բնակարանային աջակցության ծրագրերն ավելի բազմազան դարձնելու հարցում: Բացի բնակարանային միկրոֆինանսավորման երկու ծրագրերից, որոնք են՝ **«Բնակարանային միկրոֆինանսավորում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին»** և **«Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին»**, որոնք հնարավորություն են տալիս ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին օգտվելու մատչելի բնակարանային վարկերից՝ բարելավելու իրենց բնակարանային պայմանները, Հաբիթաթ Արմենիան սկսել է **«Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին» (ԲԲՇԷԱԲ)** ծրագրի իրագործումը, որը նպաստում է նաև համատիրությունների զարգացմանը: Մեկ այլ ծրագիր, որն ուղղված է համատիրութունների աշխատանքին, կոչվում է **«Հասարակության մասնակցության ընդլայնումը Հայաստանի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացում»:**
Վերջին երկու ծրագրերը, ներառյալ «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում» ծրագիրը գործընկերային հարաբերություններ է հաստատում համատիրությունների, բնակիչների, ֆինանսական կազմակերպությունների և քաղաքապետարանների միջև՝ բարեկարգելու բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները կամ բարելավելու դրանց էներգաարդյունավետությունը:
Կարևորելով էներգաարդյունավետության հասանելիությունը՝ Հաբիթաթ Արմենիան նախաձեռնել է մի նոր ծրագիր, որի նպատակն է օգնել ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին կիրառել արևային պանելները՝ որպես շոգեկաթսաներ և տաքացուցիչներ:
ՀՖՀ Արմենիան շարունակում է նաև հյուրընկալել միջազգային կամավորների՝ օգնելու բնակարանային կարիք ունեցող ընտանիքներին և շարունակում է գործունեություն ծավալել Աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ուղղությամբ:
ՀՖՀ Արմենիայի անձնակազմը և ես շատ ուրախ ենք, որ տարեցտարի Հաբիթաթ Արմենիան աջակցում է ավելի ու ավելի շատ հայ ընտանիքների՝ ապրելու բարելավված պայմաններում, և որ վերջիններս իրենց երեխաների հետ կապրեն ավելի հարմարավետ պայմաններում: Դեռ շատ անելիքներ կան, և որպես բնակարանային ոլորտի առաջատար՝ մենք նվիրված ենք մեր աշխատանքին, որպեսզի յուրաքանչյուր հայ ընտանիք ունենա ապահով, մատչելի և պատշաճ տուն:
Մեր նպատակին հասնելու համար մենք հայցում ենք Ձեր աջակցությունը և համագործակցությունը և խրախուսում ենք, որպեսզի նվիրատվություն կատարեք Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիային: Մենք հույս ունենք և ի սրտե աղոթում ենք, որ դուք կմտածեք մեր ծրագրին օգնելու մասին և նվիրատվություն կկատարեք: Ձեր օգնությամբ մենք կարող ենք երեխային ապահովել քնելու տաք տեղով, ընտանիքին ապահովել խոհանոցով, որտեղ ճաշ կպատրաստեն կամ կօգնենք նրանց ունենալ պատշաճ լոգարան:
Նախապես շնորհակալ ենք Ձեր օժանդակության և մեր հանդեպ ունեցած հավատի համար:
Հարգանքներով՝
Լուիզա Վարդանյան,
Գործադիր Տնօրեն

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԹՎԵՐՈՎ

Այստեղ ներկայացնում ենք որոշ թվեր ՀՖՀ Արմենիայի ՖՏ 2014 թ. աշխատանքից, որոնք կարևորում ենք Ձեզ հետ կիսել և նշել.

656

Գործընկեր ընտանիքների թիվը, որոնց ծառայություն է մատուցվել ՀՖՀ Արմենիայի և միկրոֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) («Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ և «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ) միջև համագործակցության արդյունքում:

2,245,605 ԱՄՆ դոլար

Ընդհանուր գումարը, որը տրամադրվել է ընտանիքներին բնակարանային փոքր վարկերի տեսքով Հայաստանում:

1,011

Մարդկանց թիվը, որոնք ստացել են բնակարանային պայմանների բարելավման աջակից ծառայություններ (ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում և շինարարության տեխնիկական խորհրդատվություն):

572

Կամավորական աշխատանքի ժամերի քանակը, որը ներառում է Գլոբալ վիլիջ և Մեկօրյա շինարարություն ծրագրերը:

86

Ընտանիքների թիվը, որոնք ապրում են համատիրության կողմից կառավարվող վերանորոգված բազմաբնակարան շենքերում:

Habitat for Humanity® Armenia

ԳԼՈՒԽ 1:
ԿԱՌՈՒՑԵԼ ՏՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Բնակարանային միկրոֆինանսավորում. բնակարանների վերանորոգում, կիսակառույցների շինարարություն և արևային էներգիայի օգտագործման խթանում

Պատշաճ տունը ավելին է, քան պարզապես ապաստարան

Քառասուներեքամյա Խաչիկը մեծացել է բազմանդամ ընտանիքում՝ պապենական տանը, որն ուներ խոնավության մեծ խնդիր: Իրավիճակը հետզհետե վատթարանում էր՝ հանգեցնելով առողջական լուրջ խնդիրների: Խաչիկը հաճախ ստիպված էր լինում բացակայել դասերից վատառողջ լինելու պատճառով: Վատ կենսապայմանները նաև սահմանափակում էր ընկերների հետ շփումը, որն էլ իր հերթին խաթարում էր նրա զարգացման բնականոն ընթացքը:
Դառնալով հայր՝ Խաչիկը գիտակցում էր, որ վատ բնակարանային պայմանները կարող էին քայքայել իր եռամյա որդու՝ Գոռի առողջությունը: Նա չէր ուզում, որ որդին զգա վատ պայմաններում ապրելու ծանրությունը՝ աղավաղելով իր մանկությունը և վտանգելով իր ապագան:
Խաչիկը հուսահատ փնտրում էր բնակարանային պայմանների բարելավման տարբերակներ, երբ ընտրվեց որպես Հաբիթաթի գործընկեր ընտանիք:
«Հաբիթաթը լույս էր մթության մեջ, որն անմիջապես փոխեց մեր կյանքը,-ասում է Խաչիկը,-այն մեզ ավելի վառ ապագայի հույս ներշնչեց»:
Նրանք տեղադրել են նոր պատուհաններ, ջրուղիներ և վերանորոգել են հատակը: Նոր պատուհանները կօգնեն Գասպարյաններին տունը տաք պահել և կպարգևեն մտքի խաղաղություն Գոռի առողջության և

Օժանդակելով ընտանիքներին քայլ առ քայլ

ՀՖՀ Արմենիան անբավարար բնակարանային պայմանների խնդիրը փորձում է լուծել բնակարանային միկրոֆինանսավորման մի շարք ծրագրերի իրականացման միջոցով՝ համագործակցելով «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ: Այս ծրագրերի նպատակն է օժանդակել ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին վերանորոգելու և վերակառուցելու իրենց կացարանները, ավարտին հասցնելու իրենց կիսակառույց տները, բարելավելու էներգաարդյունավետությունը, ինչպես նաև՝ ջրամատակարարման և սանիտարական պայմանները: Ի հավելումն՝ ծրագրերը նպատակ են հետապնդում կյանքի վերակոչել պատերազմից տուժած համայնքներին:

Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին

ՀՖՀ Արմենիան, համագործակցելով «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ, իրականացնում է «Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին» ծրագիրը:
Բնակարանային անբարեկեցիկ պայմանների՝ կանանց առողջության վրա վատ ներազդելու փաստերը հետզհետե ավելանում են: Ֆինանսների սղությամբ զուգորդված կեցության այդպիսի պայմանները կանանց ավելի խոցելի են դարձնում առողջության համար վնասակար և անապահով իրավիճակների նկատմամբ:

անվտանգության մասին հոգալու համար:
«Մենք անչափ շնորհակալ ենք Հաբիթաթ Արմենիայից աջակցության համար: Դեռևս շատ աշխատանք կա անելու, բայց մեր տունն արդեն ավելի ապահով է որդուս համար»,- ասում է Խաչիկը:
Երեխայի առողջ աճը և զարգացումը կախված են տարբեր գործոններից, այդ թվում այն միջավայրից, որտեղ նրանք ապրում են: Այսօր, շնորհիվ Հաբիթաթ Արմենիայի աջակցության, Գոռն ունի ապահով տեղ քնելու, խաղալու և անհոգ վայելելու իր մանկությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցել ոչ պատշաճ կացարաններում բնակվող ցածր և կամ միջին եկամուտ ունեցող, սակայն տնտեսապես ակտիվ կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին՝ տրամադրելով տան վերանորոգման նպատակային վարկեր՝ զուգորդված տեխնիկական խորհրդատվությամբ և ֆինանսական միջոցների կառավարման հմտությունների ուսուցմամբ: Աջակցության այս ծառայություններն օգնում են կատարել խնայողություններ, որոնք ի թիվս այլ նպատակների՝ կարող են ուղղվել բնակարանային պայմանների բարելավմանը:
2014 ֆինանսական տարվա ընթացքում օժանդակություն է ստացել 110 ընտանիք. ցածր տոկոսադրույքով տրամադրված վարկերը նպաստել են վերանորոգման կամ կիսակառույց տների շինարարության աշխատանքներին:
Համաձայն ամենամյա մոնիտորինգի արդյունքների՝ բնակարանների բարեկարգման միջոցառումները հանգեցրել են մի շարք դրական հետևանքների: Առավել հաճախ իրականացված միջոցառումները ներառել են ընդհանուր վերանորոգման աշխատանքները՝ հանգեցնելով տների սանիտարահիգիենիկ պայմանների և ջրամատակարարման բարելավմանը: Դրական փոփոխություն է գրանցվել նաև կառուցվածքի, ամրության, ինչպես նաև՝ էներգախնայողության առումներով:

Երեսուն տարի շարունակ մենք սպասել ենք այս պահին

Տասնամյակներ շարունակ աղքատ բնակարանային պայմաններում ապրելուց հետո Սարդարյանների ընտանիքը պատրաստվում էր սկսել տան վերանորոգումը, երբ Սերժիկն ախտորոշվեց սրտի հիվանդությամբ: Սա ուժգին հարված էր ընտանիքի համար հենց այն պահին, երբ նրանք այդքան մոտ էին իրականացնելու երկար սպասված երազանքը: Սերժիկը, ով նախկինում աշխատում էր որպես վարորդ, այժմ թոշակառու է և աստիճանաբար ապաքինվում է սրտի վիրահատությունից հետո: Վերգուշը՝ Սերժիկի կինը, ութ անդամներից բաղկացած ընտանիքի միակ գումար վաստակողն է, և նրա աշխատավարձը բավական չէ ընտանքի սնունդն ապահովելու և միաժամանակ բնակարանային խնդիրները լուծելու համար: Աղքատ պայմանների խնդիրը ճակատագրական կարող էր լինել մատաղ սերնդի համար: Նրանց տունը խոնավ էր ամբողջ տարի, որը բացասաբար էր անդրադառնում երեխաների առողջության վրա: Ձմռանն ընտանիքը հավաքվում էր մեկ սենյակում, քանի որ դժվար էր ջեռուցել ամբողջ տունը: Հաբիթաթ Արմենիայի բնակարանային միկրոֆինանսավորման ծրագիրը շրջադարձային էր Սարդարյանների կյանքի որակի բարելավման գործում: Այժմ երեխաներն իրենց սեփական անկյունն ունեն քնելու, խաղալու և առողջ միջավայրում մեծանալու համար: «Անհավատալի է, որ մեզ հնարավորություն ընձեռվեց բարելավելու մեր կենսապայմանները: Երեսուն տարի շարունակ մենք սպասել ենք այս պահին: Ձեր աջակցությունն ակնհայտորեն փոխել է մեր կյանքը»,-ասում է Սերժիկը:

Բնակարանային միկրոֆինանսավորում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին

Ծրագիրն իրականացվում է «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ համատեղ: Ծրագրի շրջանակներում ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքները ինչպես գյուղական, այնպես նաև քաղաքային համայնքներում օգտվում են բնակարանային միկրոֆինանսավորման մատչելի ծառայություններից: Առանցքային նպատակներից է կացարանային պայմանների բարելավումը: Ծրագրի մաս կազմող մոնիտորինգն ու տեխնիկական աջակցությունը թույլ են տալիս գնահատել գործընկեր ընտանիքների գիտելիքները և ձեռնարկել ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված աշխատանքներ:

Վարկերը համապատասխանորեն մշակելու և շուկայահանելու նպատակով ծրագրի նախագծման ժամանակ հաշվի են առնվել այս կամ այն մարզին բնորոշ տարբեր բնակարանային կարիքներ:

Նախորդ տարվա ընթացքում կեցության պայմանների բարելավմանն ուղղված վարկեր են տրամադրվել 546 ընտանիքի:

Ըստ մոնիտորինգի արդյունքների՝ գործընկեր ընտանիքներին բավարարում են թե՛ վարկի պայմանները, թե՛ մատուցվող որակյալ ծառայությունները: Ծրագրի շնորհիվ ընտանիքները կարողացել են լուծել խնդիրներ, ինչպիսիք են՝ խմելու ջրի և կոյուղագծերի նորոգման աշխատանքները: Ի լրումն՝ ջեռուցման համակարգի բարենորոգումների արդյունքում նվազել են ջեռուցման ծախսերը, իսկ կեցության պայմանները դարձել են առավել

հարմարավետ: Միաժամանակ ապահովվել է տների ամրությունն ու կայունությունը, իսկ բարեփոխված կառուցվածքային ամրությունը դարձել է խոնավության և դրանից բխող շնչառական և օդածին հիվանդությունների կանխման առանցքային նախապայման:

Արևային էներգիայի օգտագործումը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կողմից

Հայաստանը հարուստ է բնական արևային էներգիայի ռեսուրսներով: Միջին տարեկան արևային ճառագայթման էներգիայի արժեքը Հայաստանի համար կազմում է 1,720 կվ/մ^2, որը համապատասխանում է տարեկան 2,500 արևային ժամի:
Այդ պատճառով արևային էներգիայի կիրառումը անհրաժեշտ լուծում է ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կենցաղային պայմանների բարելավման համար՝ հաշվի առնելով Հայաստանում առկա սահմանափակ ռեսուրսները: Այն ընտանիքներին հնարավորություն է ընձեռում տարվա մեծ մասն ունենալ մատչելի ջրատաքացում, որը կախված չէ ներկրվող և անընդհատ թանկացող էներգակիրներից:
Արևային էներգիայի օգտագործումը հնարավորություն ունի դառնալ վերականգնվող էներգիայի նշանակալի այլընտրանք Հայաստանի ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար:
«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ համատեղ իրականացվող այս ծրագրի միջոցով ՀՖՀ Արմենիան նպատակ ունի վերականգնվող էներգիան առավել հասանելի դարձնել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար՝ միաժամանակ հնարավոր դարձնելով նաև մատչելի տաք ջրի մատակարարումը ողջ տարվա ընթացքում:
Արևային ջերմային համակարգերը թիրախային խմբերին հասանելի դարձնելուց բացի՝ կազմակերպությունը բարձրացնում է իրազեկությունը արևային տեխնոլոգիաների՝ մարդկանց և շրջակա միջավայրի համար օգուտների մասին:

1 ԳՈՐԾԸՆԿԵՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ (դինամիկա)



2 ՖՏ 2014-ում ԳՈՐԾԸՆԿԵՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ



3 ՖՏ 2014-ում ՖՈՆԴԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ



Բազմաբնակարան շենքեր
Համատիրությունների կարողությունների զարգացում

Բնակիչները համատիրության հետ միասին բարեկարգեցին իրենց բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքները

«Մենք այսօր մեծ հաճույք ենք ստանում մեր շենքը մտնելուց, հաճույքով հյուրեր ենք հրավիրում,- պատմում է Շենգավիթ համայնքի Գևորգ Չաուշ 39/1 շենքի բնակիչը,-ողջ շենքի համար, որն ունի երեք մուտքեր, փոխվեցին բոլոր դռները և պատուհանները, շքամուտքերը հիմնովին վերանորոգվեցին: Շենքի բնակիչները վաղուց էին երազում այդ փոփոխության մասին և այդ փոփոխությունը իրականություն դարձավ Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիայի հետ համագործակցության շնորհիվ»:
Գևորգ Չաուշ 39/1 շենքի բնակիչների կողմից երկար սպասված համատեղ ծրագիրն իրականացվեց Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ վարչական շրջանի, Գևորգ Չաուշ համատիրության, Ինեկոբանկի և Հաբիթաթ Արմենիայի հետ սերտ համագործակցությամբ:
Երևանի քաղաքապետարանը, ընդառաջ գնալով բնակիչների՝ Հաբիթաթ Արմենիայի կողմից իրականացվող «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում» ծրագրին մասնակցելու մեծ ցանկությանը, իրականացրել է 30% սուբսիդավորում, իսկ Շենգավիթ վարչական շրջանը սուբսիդավորել է տոկոսագումարի մարումը:
Սա վառ օրինակ է այլ շենքերի բնակիչների և համատիրությունների համար՝ սկսելու իրագործել իրենց պատասխանատվությունը իրենց իսկ տարածքների հանդեպ: «Համատիրություն-բնակիչներ հարաբերությունները պետք է ամրապնդվեն: Շատ կարևոր է, որպեսզի բնակիչները հասկանան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների հետ կապված իրենց իրավունքները և պարտականությունները, որոնց համասեփականատերերը հենց իրենք՝ բնակիչներն են: Շատ ուրախ եմ, որ մեր այս նախաձեռնությանը ձեռք են մեկնել

Բազմաբնակարան շենքեր. ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման ֆինանսավորում, էներգաարդյունավետությանն ուղղված բարեփոխումներ, համատիրությունների կարողությունների զարգացում

Ներկայում բազմաբնակարան շենքերի կառավարումն ու պահպանումը հրատապ խնդիր է Հայաստանի համար: Երկրում բնակարանային ֆոնդի ստվար հատվածը անմխիթար վիճակում է: Տնային տնտեսությունների եկամտի կրճատումը (որը հետևանք էր տնտեսության անցումային փուլի) սահմանափակել է բնակարանային ֆոնդի վերանորոգմանն ու սպասարկմանն ուղղված միջոցները: Ոլորտի վրա համարժեք բացասական ազդեցություն է ունեցել նաև բնակիչների փորձի և սեփականատիրությունից բխող պարտականությունների մասին տեղեկացվածության ցածր մակարդակը: Սպասարկման վճարներն այնքան ցածր են, որ բավարար չեն անգամ շենքերի վերանորոգման ծախսերը հոգալու համար: Արդյունքում շենքերի վիճակի վատթարացումը շարունակվում է, իսկ կոմունալ ծառայությունների տրամադրումն անբավարար է:
Բնակարանների ջեռուցման ծախսերը տարածաշրջանի երկրներում կազմում են ընդհանուր էներգիայի օգտագործման 30%-ից ավելին, քանի որ կառուցապատման և ջեռուցման նախկինում կիրառված մեթոդները չեն հիմնվել էներգաարդյունավետության չափանիշների վրա: Էներգիայի բավական անարդյունավետ օգտագործումն ավելի է խորացնում էլեկտրաէներգիայի գնաճի

քաղաքապետարանները և ինքնակառավարման մարմինները, և, շնորհիվ մեր սերտ համագործակցության, մենք կարողացել ենք այսօր դրական արդյունքներ գրանցել, և ասել, որ ծրագիրը հաջողված է: Միայն վստահության, կամքի և համատեղ աշխատանքի շնորհիվ է հնարավոր այս ծրագրի իրագործումը»,-ասում է Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի Ծրագրերի տնօրեն Կարինե Մաիլյանը:

«Բնակիչները պետք է գիտակցեն, որ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները իրենց սեփականություն են, ինչպես իրենց անհատական տները և պետք է հոգ տանեն, խնամեն այդ տարածքները, ինչպես որ իրենց տները»,- ավելացնում է Գևորգ Չաուշ 39/1շենքի բնակիչը:

«Համատիրության ղեկավարները մեծ անելիք ունեն այստեղ, մենք պետք է աշխատենք յուրաքանչյուր բնակչի հետ անհատապես, հասկանանք շենքի առաջնային խնդիրները, միասին որոշենք առաջիկա վերանորոգման ծրագիրը: Իսկ վերանորոգումից հետո բնակիչների հետ միասին պահպանենք, չփչացնենք, շարունակենք խնամել»,-նշում է Հասմիկ Ղազարյանը, Գևորգ Չաուշ համատիրության ղեկավարը:

«Ուրախ ենք, որ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի համատեղ ջանքերով բազմաբնակարան շենքերի վերանորոգման ծրագիրը շարունակական բնույթ է կրում: Լինելով սոցիալապես պատասխանատու կազմակերպություն՝ Ինեկոբանկն այս նախագիծը դիտարկում է որպես ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կենսամակարդակը բարելավելու փայլուն հնարավորություն»,-նշում է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մասնաճյուղի կառավարիչ Հայկ Գասպարյանը:

«Ես խորհուրդ կտամ շենքի բնակիչներին համեմատել իրենց էներգիայի ծախսերը մինչև այս վերանորոգումը և վերանորոգումից հետո, դուք ունենալու եք զգալի էներգիայի խնայողություն ի շնորհիվ շքամուտքերի նոր դռների և պատուհանների»,-նշում է Աստղիկ Պասոյանը, էներգաարդյունավետության և բնակարանային ոլորտի փորձագետը:

ազդեցությունը ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վրա:

ՀՖՀ Արմենիան իրականացնում է երեք ծրագիր՝ ուղղված բազմաբնակարան շենքերում ընդհանուր տարածքների վերանորոգմանը, էներգաարդյունավետության բարձրացմանը և համատիրությունների կարողությունների զարգացմանը:

Բազմաբնակարան շենքերի վերանորոգում

Ծրագիրը մեկնարկել է 2011 թ-ին: Ծրագրի նպատակն է համատիրությունների հետ համագործակցությամբ աջակցել բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների (տանիք, մուտք, պատուհաններ, դռներ և այլն) վերանորոգմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը: «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի հետ համատեղ մշակվել է ֆինանսական մոդել (վարկային ռեսուրսների և քաղաքապետարանների կողմից տրամադրվող սուբսիդավորման համադրում): 2014 ֆինանսական տարվա ընթացքում երկու ենթածրագրեր են իրականացվել Երևանում և Վանաձորում: «Սատար» համատիրության հետ համագործակցությամբ Վանաձոր քաղաքում ամբողջությամբ վերանորոգվել է մեկ բազմաբնակարան շենքի տանիքը: Դա հնարավոր է դարձել քաղաքապետարանի կողմից տրամադրվող 40% սուբսիդավորման և 60% վարկային միջոցների համադրմամբ: Այս միջոցառման արդյունքում աջակցություն է ստացել 23 ընտանիք: Միաժամանակ Երևանում բազմաբնակարան շենքի երեք մուտքեր բարեկարգվել են քաղաքապետարանի 30% սուբսիդավորմամբ և 70% վարկային միջոցներով՝ այսպիսով ձեռք մեկնելով 63 ընտանիքի: Երկու ենթածրագրերի

իրականացման գործում նշանակալի է եղել համատիրությունների մասնակցությունը:

Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին (ԲԲՇԷԱԲ)

Ծրագիրը նպատակ ունի նվազեցնել էներգիայի աճող գների ազդեցությունը ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վրա՝ ավելացնելով էներգախնայողությանն ուղղված միջոցառումները: Մինչև 2015 թ-ի հունիս ամիսը ծրագիրը նպատակ ունի Հայաստանում բարելավել բազմաբնակարան շենքերում կեցության պայմանները: Միաժամանակ համատիրությունների, սեփականատերերի, տեղական իշխանությունների և ֆինանսական կառույցների հետ համագործակցությամբ ծրագիրը նպաստում է էներգաարդյունավետության բարձրացմանը՝ հանգեցնելով համայնքային կյանքի կայուն զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում արդեն իսկ կազմակերպվել են մի շարք քննարկումներ և հանդիպումներ՝ համատեղ որոշումների կայացման գործընթացին նպաստելու, իրազեկությունը բարձրացնելու և համագործակցությունը ամրապնդելու ուղղությամբ: Բացի այդ՝ մշակվել են ծրագրի իրականացման ֆինանսական մոդելներն ու շենքերի ընտրության մեթոդոլոգիան: Այնուհետև ընտրված շենքերում իրականացվել է էներգաաուդիտ էներգախնայողության ներուժը գնահատելու համար:

Ֆինանսական մոդելը հիմնված է քաղաքապետարանի և վարկային ռեսուրսների



USAID FROM THE AMERICAN PEOPLE

Habitat for Humanity REELIH RESIDENTIAL ENERGY EFFICIENCY FOR LOW-INCOME HOUSEHOLDS

համատեղման վրա: Երևանի քաղաքապետարանը համաձայնել է 30%-ի չափով աջակցել ծրագրի իրականացմանը՝ այսպիսով կիսելով վարկի հետվճարման պատասխանատվությունը բնակիչների հետ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև հետազոտություններ, որոնց թվում են, օրինակ՝ բնակչության շրջանում էներգաարդյունավետության ուսումնասիրությունը և համատիրությունների կարողությունների գնահատումը: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ-ի, ՀՖՀԻ-ի և ՀՖՀ Արմենիայի կողմից:

Հասարակության մասնակցության ընդլայնումը Հայաստանի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացում

Հայաստանի բնակչության կեսից ավելին ապրում է բազմաբնակարան շենքերում (434,892 միավոր), որոնց մեծ մասը կառուցվել է խորհրդային ժամանակաշրջանում: 90-ականներին բնակարանների սեփականաշնորհումը ուղեկցվեց կառավարման և պահպանման համակարգերի լուծարումով, ինչպես նաև կոմունալ ծառայությունների վարձերի կտրուկ բարձրացմամբ: Վերջին տասնամյակում բազմաբնակարան շենքերի կառավարման և պահպանման իրավական և հանրային քաղաքականության ոլորտում արվել են փոփոխություններ: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի կիրառումը դեռևս մնում է սահմանափակ և անարդյունավետ: ՀՖՀ Արմենիան իրականացնում է բազմաբնակարան շենքերի կառավարման օրենսդրական և քաղաքական դաշտերի բարելավմանն ուղղված ծրագիր, որը ֆինանսավորվում է «Վիշեգրադ» միջազգային հիմնադրամի կողմից: Ծրագրի նպատակն է քաղաքացիական հասարակության մասնակցությամբ բազմաբնակարան շենքերի ոլորտում բնակարանային իրավունքների իրականացման բարելավումը: Այն նպատակ է հետապնդում նաև ձևավորել գիտելիքահեն քաղաքացիական հարթակ՝ հիմնվելով «Վիշեգրադ» միջազգային հիմնադրամի գործընկեր երկրների և Ուկրաինայի փորձի վրա: Ծրագրի մեկ այլ նպատակն է բազմաբնակարան շենքերի կառավարման օրենսդրական և քաղաքական բարեփոխումների առաջարկությունների մշակումը:

Այդ նպատակով մշակվել է տարածաշրջանային հետազոտություն. այն ներառում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործում համատիրությունների դերի վերլուծություն:

Հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում նախատեսվում է համաժողով, որը հարթակ կհանդիսանա բազմաբնակարան շենքերի կառավարմանը, պահպանմանն ու կարգավորիչ դրույթներին վերաբերող գիտելիքների և փորձի փոխանակման համար:

Visegrad Fund

www.visegradfund.org

Տեխնիկական աջակցություն

Բնակարանային աղքատությունը նվազեցնելու, ինչպես նաև ֆինանսական միջոցների մատչելիությունը նշված ընտանիքների համար ապահովելու նպատակով ՀՖՀ Արմենիան աջակցում է ցածր ու միջին եկամուտ ունեցող ընտանիքներին բնակարանի վերանորոգման և այդ աշխատանքների կազմակերպման հարցում: Բացի այդ՝ կազմակերպությունը տրամադրում է ֆինանսական միջոցների կառավարման, շինարարության տեխնիկական աջակցության և էներգաարդյունավետության դասընթացներ ու խորհրդատվություն:

Կազմակերպության շինարարության և աղետների արձագանքման ղեկավարը աշխատում է գործընկեր ընտանիքների հետ՝ տրամադրելով առավել ապահով և ամուր կացարանային պայմաններին ուղղված տեխնիկական խորհրդատվություն՝ զուգահեռաբար հավաստելով հետևողականությունը որակական չափանիշներին: Տեխնիկական աջակցությանը իր մասնակցությունն է ցուցաբերում նաև Գեղարքունիքի մարզում հաստատված գործընկեր շինարարը:

Ինստիտուցիոնալ մակարդակում ՀՖՀ Արմենիան օժանդակում է նաև ՈՒՎԿ-ներին. կազմակերպությունը տրամադրում է կարողությունների հզորացմանն ուղղված տեխնիկական աջակցություն (վարկային գործակալների ուսուցում, շինարարության տեխնիկական աջակցության և էներգաարդյունավետության դասընթացներ, ծրագրի մոնիտորինգ, շուկայի հետազոտություն, նոր բնակարանային պրոդուկտների մշակում, կրթական և գովազդային նյութերի մշակում) թիրախային խմբերին բնակարանային վարկեր և ծառայություններ հաջողությամբ տրամադրելու նպատակով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՋԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲՈԱԾ) ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 5



Աղետների ռիսկի նվազեցում և արձագանքում (ԱՌՆԱ)

ՀՖՀ Արմենիայի Աղետների պատրաստվածության և արձագանքման ռազմավարությամբ սահմանվում են ՀՖՀ Արմենիայի աղետների արձագանքման ծրագրի սկզբունքները, չափանիշները, ինչպես նաև՝ գործողությունների ու համագործակցության շրջանակները: ԱՌՆԱ հիմնական գործողությունները ներառում են ռիսկերի նվազեցումը, պատրաստվածությունը և արձագանքումը:
ՀՖՀ Արմենիան Աղետների կառավարման թիմի և Ազգային պլատֆորմի (ԱՊ) անդամ է և արտակարգ իրավիճակների դեպքում ներգրավվելու է համատեղ գործողություններում՝ աջակցելու Հայաստանի կառավարությանը կյանքեր փրկելու և կորուստները նվազեցնելու գործում:

Աղետների ռիսկերի նվազեցումը

Ներկայում ՀՖՀ Արմենիան մշակում է աղետների ռիսկերի նվազեցման մի շարք ռազմավարություններ: Դրանք, մասնավորապես, ներառում են աղետների ռիսկերի կառավարման վերաբերյալ մասնագիտական տեխնիկական խորհրդատվության տրամադրում տվյալ տարածքի ընտանիքներին: Առաջիկայում ծրագրվում է միկրոֆինանսավորման կարողությունների զարգացման ծրագրերին կից համապատասխան ցուցումներ պարունակող պաստառների տպագրությունը: Նաև նախատեսվում է հատուկ ուշադրություն դարձնել համատիրությունների միջոցով կառավարվող բազմաբնակարան շենքերի որոշակի մասերի վերանորոգմանը, ինչպիսիք են՝ աստիճանավանդակները և ելքերը (աղետի դեպքում շենքից արագ և ապահով տարհանմանը օժանդակելու համար): Ըստ անհրաժեշտության՝ կմշակվեն նաև աջակցությանն ուղղված նոր գործողություններ տեղական համայնքների և այլ գործընկերների հետ միասին:

Պատրաստվածությունը

ՀՖՀ Արմենիան գիտակցում է աղետների արդյունավետ պատրաստվածության կարևորությունը և առավելագույն ջանքեր է ներդնում հզորացնելու ինչպես աղետների արձագանքման համագործակցության շրջանակը, այնպես նաև՝ զարգացնելու կազմակերպական կարողությունները աղետներին արձագանքելու նպատակով:
ՀՖՀ Արմենիան մշակել է «Ինչպես դիմակայել երկրաշարժերին» տեղեկատվական ձեռնարկը, շահառուների կարողությունների զարգացման, հանրային իրազեկության բարձրացման և երկրաշարժերի ռիսկի նվազեցման նպատակով: Ձեռնարկը ընդգրկում է խորհուրդներ այն մասին, թե ինչ պետք է անել նախքան երկրաշարժը, դրա ընթացքում և հետո: Այս առումով կազմակերպությունը համագործակցում է տարբեր շահագրգիռ կողմերի և կազմակերպությունների հետ ձեռնարկի

բաշխման և արդյունավետ փոխգործակցության համար: Այս կապակցությամբ նախնական

պայմանավորվածություններ են ձեռք բերվել ՕՔՍՖԱՄ Արմենիայի, Հայկական Կարմիր խաչի ընկերության և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) հետ:
ՀՖՀ Արմենիան ողջունում է համագործակցության հնարավորությունները և նվիրատուների ներգրավումը տեղական և ազգային մակարդակներում՝ աշխատելով համայնքներում ռիսկերի գնահատման և պաշտպանական (դիմակայման) հզորությունների ստեղծման ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

Արձագանքումը

ՀՖՀ Արմենիան մշակել է երկրին համապատասխանող Աղետների արձագանքման օպերատիվ պլան: Պլանով նախատեսվում է արձագանքման ժամանակացույցը՝ կից գնահատման ձևաթղթերով, հաղորդակցության ստանդարտ նյութերով, օրինակելի բյուջեներով և տեխնիկական լուծումներով. այն իրատեսորեն կարող է կիրառվել աղետի դեպքում:

Խմբային (Կլաստերային) մոտեցումը

Լինելով Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) և Աղետների կառավարման ընդլայնված թիմի (ԱԿԹ) անդամ՝ ՀՖՀ Արմենիան արտակարգ իրավիճակի դեպքում պատրաստակամ է նույն խմբով մասնակցել երկրի հումանիտար թիմի (ԵՀԹ) աշխատանքներին:
ՀՖՀԻ-ի ընթացակարգերին զուգահեռ՝ ԵՀԹ-ի իրավասությանն առնչվող արտակարգ իրավիճակի դեպքում ՀՖՀ Արմենիան կորդեգրի «կլաստերային մոտեցում»-ը: Այն միջոց է, որը հումանիտար ոլորտում ներգրավված կազմակերպությունները օգտագործում են աղետների արձագանքման գործողությունները համատեղ համակարգելու համար:
Խմբերը կմեկնարկեն աշխատանքները՝ ըստ աղետից տուժած որևէ համայնքի կարիքների՝ օգտագործելով նաև պետական համակարգման արձագանքման կարողությունները:
Երկրում գործող համապատասխան գործակալությունները (անհրաժեշտության դեպքում նաև տարածաշրջանային պատվիրակությունները) կստանձնեն կլաստերի կողմից առաջնորդվող պատասխանատվություններ, որոնք ընդունված են հումանիտար արձագանքման գլոբալ չափանիշներով:
ՀՖՀ Արմենիան նաև Կացարանի, Վաղ վերականգնման, ինչպես նաև Ջրամատակարարման և սանհիգիենայի խմբերի անդամ է:

Habitat for Humanity® Armenia

ԳԼՈՒԽ 2:

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀԵՏ

Հիմնել հարաբերություններ և տներ

Հայաստանն ին սրտում մնաց, քանի որ հայերը ջերմ, բարի և հյուրընկալ մարդիկ են: Ես նախկինում ղեկավարել եմ 49 Գլոբալ Վիլիջ թիմերի և չեմ կարող բավարար չափով երախտիքս արտահայտել իմ 50-րդ թիմի ղեկավարումը Հայաստանում նշելու համար: Մեզ հնարավորություն ընձեռվեց օգնելու Հաբիթաթի գործընկեր մի ընտանիքի կատարելու իրենց համեստ տան երկրորդ հարկի վերանորոգման աշխատանքները: Ընտանիքն իրենց տան առաջին հարկն ամբողջովին տրամադրեց մեզ: Տանտիրուհին, ով դպրոցի ուսուցչուհի էր, դպրոցից շտապ տուն էր գալիս՝ մեր ճաշի կամ հետճաշի համար յուրահատուկ ուտեստներ պատրաստելու նպատակով: Ոչ միայն հայրն ու դեռահաս որդիներն էին ներգրավված շինարարության մեջ, այլև գյուղի հարևաններն էին երբեմն աշխատում մեզ հետ, ինչպես նաև մեզ մրգեր բերում ճաշի կամ ընդմիջման համար: Գրպաններն ու ձեռքերը սնունդով լի և դեմքերի լայն ժպիտով բլրից մեր շինհրապարակ իջնող գյուղացիներին դիտելը մեզ գերագույն հաճույք էր պատճառում: Նրանք աշխատում էին մեզ հետ և հյուրասիրում իրենց ծառերի բարիքներից: Հաճախ մեզ հրավիրում էին իրենց տուն և ցույց տալիս իրենց ապրուստն ու պայմանները: Գյուղի քահանան ընկերացավ մեզ հետ և ջերմորեն ընդունեց համայնքի եկեղեցում, ինչպես նաև իրականացրեց «մեր» Հաբիթաթի տան օրհնության արարողությունը: Նա միշտ ընդգրկում էր մեզ իր աղոթքներում և հատուկ օրհնանքներ շնորհում ամեն անգամ մեզ հանդիպելիս: Մշակութային այս փորձառությունը հնարավոր դարձավ Հաբիթաթի հոյակապ անձնակազմի շնորհիվ, ովքեր ջանք ու եռանդ չխնայեցին մեզ հիանալի փորձառություն պարգևելու և գործերի ընթացքն անթերի դարձնելու համար: Նրանք լավագու՛յնն են: Իմ և իմ թիմի համար մեծ

Գլոբալ Վիլիջ

Գլոբալ Վիլիջ ծրագիրն առաջարկում է դեպի Հայաստան կարճաժամկետ ուղևորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում կամավորներին անմիջականորեն ներգրավվել Հաբիթաթի աշխատանքներին և ուսումնասիրել նոր երկրներ ու մշակույթներ: Հայաստանում «Գլոբալ Վիլիջ» թիմի անդամները ձեռք-ձեռքի աշխատում են գործընկեր ընտանիքների և համայնքի անդամների հետ՝ բարեկարգելով տներ և իրազեկելով անբավարար բնակարանային պայմանների խնդրի, ինչպես նաև թե՛ Հայաստանում, թե՛ ամբողջ աշխարհում Հաբիթաթի՝ պարզ ու մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելուն ուղղված ջանքերի մասին: 2014 ֆինանսական տարվա ընթացքում Հաբիթաթ Արմենիան հյուրընկալել է 2 միջազգային կամավորական թիմերի Միացյալ Նահանգներից և Հյուսիսային Իռլանդիայից:

օրհնություն էր այս ժամանակը Հայաստանում անցկացնելը, երկիր, որի բնակիչները շատ դժվարություններ են տեսել, սակայն լիահույս են մնացել և շատ են աշխատում իրենց երկրի ապագայի համար: Աստված օրհնի իմ նոր հայ ընկերներին: Հուսով եմ, որ շուտով կվերադառնամ մեկ այլ թիմի հետ՝ ձեռք ձեռքի աշխատելու հայերի հետ՝ տուն կառուցելու և հարաբերություններ ստեղծելու նպատակով:

Ուանդա Սմիթ՝ կամավորական թիմի ղեկավար

ՖԼԵՔՍ շրջանավարտներն աշխատում են Հաբիթաթի հետ

2014 ՖՏ ընթացքում Հաբիթաթ Արմենիան մեկօրյա արշավի շրջանակներում հյուրընկալել է մեկ տեղական կամավորական խմբի: Ծրագրին միացել են ՖԼԵՔՍ շրջանավարտ ծրագրի ուսանողները՝ մեկ օրով ներգրավվելով Փարսադանյանների տան շինարարական աշխատանքներին:
Փարսադանյանների բազմանդամ ընտանիքը վաղուց էր երազում սեփական հարկի տակ ապրելու մասին: Ժամանակավոր կացարաններում բնակվելով՝ յոթ հոգուց բաղկացած ընտանիքը շարունակ տեղափոխվում էր սեփական տանիք չունենալու պատճառով: Նրանց վերջին ապաստանը վթարային շենքի մի փոքրիկ բնակարան էր, որտեղ յուրաքանչյուր րոպեն կարող էր լինել ճակատագրական:
Վատ պայմաններում բնակվելը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ երեխաների ֆիզիկական և մտավոր առողջության համար: Քաջ գիտակցելով դա՝ Սեդան՝ ընտանիքի մայրը, հուսահատ փնտրում էր խնդիրը մեկընդմիշտ լուծելու հնարավորություններ:

Մեկօրյա շինարարություն

ՀՖՀ Արմենիան շարունակում է «Մեկօրյա շինարարություն» արշավը, որը կոչ է անում մասնավոր, միջազգային և տեղական կազմակերպություններին և խմբերին միանալու կամավորական բնակարանաշինական աշխատանքներին և բարելավելու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կենսապայմանները՝ դրանով իսկ փոխելով մարդկանց և համայքների կյանքը:
Ձեր թիմի անդամները, անկախ իրենց շինարարական հմտություններից, կարող են միանալ այս նախաձեռնությանը և օգնության ձեռք մեկնել Հայաստանի մարզերում բնակվող և պատշաճ բնակարանային պայմանների կարիք ունեցող հայ ընտանիքներին:

Ընտանիքն ուներ կիսակառույց տուն, բայց չուներ բավարար միջոցներ ավարտելու այն: Սեդան աշխարհի ամենաերջանիկ մայրն էր, երբ աջակցություն ստացավ Հաբիթաթ Արմենիայի բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

«Երեք սերունդ զգացել է աղքատության պայմաններում ապրելու ծանրությունը: Երեխաներս զրկված են եղել սեփական անկյունն ունենալու հնարավորությունից»,-ասում է Սեդան:

Շնորհիվ Հաբիթաթ Արմենիայի հետ համագործակցության՝ Փարսադանյանների կյանքն արմատապես փոխվեց: Նրանք ավարտին հասցրին իրենց կիսակառույց տունը՝ ձեռք ձեռքի աշխատելով միջազգային և տեղացի կամավորների հետ, ովքեր ջանք ու եռանդ չխնայեցին ցածր եկամուտ ունեցող ընտանիքի բարեկեցության համար:

«Առաջին անգամ ինձ սեփական տանիք ունենալու հնարավորություն ընձեռվեց»,-ասում է Սեդան:

Habitat for Humanity® Armenia

ԳԼՈՒԽ 3:
ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԼՈԲԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

ՀՖՀ Արմենիան լավագույնս կառավարում է այն բոլոր ֆոնդերը, որոնք տրամադրվում են բնակարանային աղքատությունը վերացնելու առաքելության համար: Ֆոնդերը արդյունավետ կառավարելու հանգամանքը ՀՖՀ Արմենիային թույլ է տալիս աջակցել Հայաստանում առավել մեծ թվով ընտանիքների և համայնքների:

Հասույթ

ՀՖՀ Արմենիան շահույթ չհետապնդող հիմնադրամ է, որին աջակցում են ՀՖՀ Արմենիայի գործունեությանը նվիրված մարդիկ: Աջակցությունը տրամադրվում է անհատների (դրամային նվիրատվություններ), կորպորացիաների (դրամային նվիրատվությունների միջոցով, ակտիվներ և ծառայություններ), հիմնադրամների, ՀՖՀ այլ գրասենյակների և այլ կազմակերպությունների կողմից ֆինանսական հատկացումների միջոցով:
2014 ֆինանսական տարում ընդհանուր եկամուտը կազմել է 177 մլն ՀՀ դրամ (433 797 ԱՄՆ դոլար). 2014 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան ֆինանսական աջակցություն է ստացել նաև Երևանի և Վանաձորի քաղաքապետարաններից:

Ծախսեր

ՀՖՀ Արմենիա հիմնադրամն իր ծախսերը դասակարգում է հետևյալ երեք հիմնական ուղղություններով.

- **Ծրագրային**
- **Ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման**
- **Կառավարման /ընդհանուր ծախսեր**

2014 ֆինանսական տարում ընդհանուր ծախսերը կազմել են 149 մլն դրամ (365 260 ԱՄՆ դոլար).

➢ **Ծրագրային ծախսեր**

2014 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիայի ծրագրայն ծախսերը կազմել են 112 մլն դրամ (273 488 ԱՄՆ դոլար), որը կազմում է ընդհանուր ծախսերի 75%–ը:

➢ **Ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման համար ծախսեր**

2014 ֆինանսական տարում ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման ծախսերը կազմել են 15 մլն դրամ (36 868 ԱՄՆ դոլար), որը ընդհանուր ծախսերի 10% էր՝ Ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման հիմնական ծրագրերը ներառում են ուղղակի նամակագրությունն ու անմիջական կապը հիմնական նվիրատուների, անհատ նվիրատուների, տասանորդային նվիրատվություն կատարող ՀՖՀ գործընկեր մասնաճյուղերի, հիմնադրամների և կորպորացիաների, հայկական սփյուռքի և այլոց հետ:

➢ **Կառավարման և ընդհանուր ծախսեր**

2014 ֆինանսական տարում կառավարման և ընդհանուր ծախսերը կազմել են 21 մլն դրամ (51 869 ԱՄՆ դոլար), որը ընդհանուր ծախսերի 14% է: Այս ծախսերը ներառում են անձնակազմի վարձատրությունը (բացի ծրագրային և ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման հարցերով անձնակազմի), կոմունալ ծախսեր, գրասենյակի վարձակալություն և սպասարկում, և ՀՖՀ Արմենիայի ամենօրյա աշխատանքներին առնչվող այլ ծախսեր՝

Տարեկան աուդիտ

ՀՖՀ Արմենիայի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են ամենամյա անկախ աուդիտի՝ ՀՖՀ Արմենիայի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը երեք տարի (2009–2011թթ.) անընդմեջ իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012 և 2013թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացրել է «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն: ՀՖՀ Արմենիան մշտապես ստացել է դրական (չձևափոխված) աուդիտորական եզրակացություն:

	ՖՏ2014 1ԱՄՆ դոլար=409,52 ՀՀ դրամ		ՖՏ2013 1ԱՄՆ դոլար = 410,377075 ՀՀ դրամ	
Ակտիվներ				
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Կանխիկ միջոցներ և դրանց համարժեքներ	27 862 611	68 037	60 805 095	148 168
Ներդրումներ	677 281 055	1 653 841	604 745 731	1 473 624
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	2 651 557	6 475	4 753 148	11 582
Այլ ակտիվներ	994 998	2 430	1 109 712	2 704
Ակտիվներ, ընդամենը	**708 790 221**	**1 730 783**	**671 413 686**	**1 636 078**
Պարտավորություններ և զուտ ակտիվներ				
Պարտավորություններ, ընդամենը	424 481 764	1 036 535	415 172 274	1 011 678
Զուտ ակտիվներ	284 308 457	694 248	256 241 412	624 400
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ	**708 790 221**	**1 730 783**	**671 413 686**	**1 636 078**

7 Զուտ ակտիվների փոփոխության մասին հաշվետվություն

	ՖՏ 2014		ՖՏ 2013	
Հասույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
ՀՖՀԻ-ի կողմից փոխանցում	115 172 025	281 237	71 100 900	173 257
Գլոբալ Վիլիջ ծրագրի շրջանակներում կատարված նվիրատվություններ	8 434 221	20 595	10 305 088	25 111
Տոկոսավճարներից ստացված եկամուտ	48 946 515	119 522	45 024 218	109 712
Տեղական նվիրատվություններ	5 095 668	12 443	27 200	66
Եկամուտներ, ընդամենը	**177 648 429**	**433 797**	**126 457 406**	**308 147**
Ծախսեր				
Ծրագրային	111 998 861	273 488	84 165 133	205 091
Կառավարման և ընդհանուր	21 241 380	51 869	28 186 422	68 684
Ռեսուրսների զարգացում	15 098 075	36 868	14 690 966	35 798
Այլ	1 243 069	3 035	2 812 768	6 854
Ծախսեր, ընդամենը	**149 581 385**	**365 260**	**129 855 289**	**316 427**
Զուտ ակտիվներում փոփոխությունը	**28 067 045**	**68 536**	**- 3 397 883**	**- 8 280**
Զուտ ակտիվները տարվա սկզբում	**256 241 412**	**625 712**	**259 639 295**	**632 680**
Զուտ ակտիվները տարվա վերջում	**284 308 457**	**694 248**	**256 241 412**	**624 400**

8 2014 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	%
ՀՖՀԻ-ից փոխանցումներ	115 մլն	281 237	65
Նվիրատվություններ Գլոբալ Վիլիջ ծրագրով	8 մլն	20 595	5
Տոկոսային եկամուտ	49 մլն	119 522	27
Տեղական նվիրատվություններ	5 մլն	12 443	3
Ընդամենը	**177** մլն	**433 797**	**100**



9 2014 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	%
Ծրագրային ծախսեր	112 մլն	273 488	75
Կառավարման և ընդհանուր	21 մլն	51 869	14
Ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման	15 մլն	36 868	10
Այլ	1 մլն	3 035	1
Ծախսեր, ընդամենը	**149** մլն	**365 260**	**100**



Habitat for Humanity® Armenia

ԳԼՈՒԽ 4:

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀՖՀ Արմենիայի առաքելությունն է Հայաստանում վերացնել բնակարանային անբավարար պայմանները, որն անհնար է առանց մեծահոգի նվիրատվությունների և աջակցության: Մենք գնահատում ենք յուրաքանչյուր նվիրատուին: Շնորհակալություն:

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՋԱԿՑԵԼ ԵՆ ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻՆ 2014 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

➢ *ԱՆՀԱՏ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ*

Մեթյու Հագոբյան
Փոլ Վիթման
Գրեգ Ափքարյան
Հարություն և Նադյա Վափորչյան
Մարգարիտ Ուոլշ
Ռազմիկ Դավուդյան
Հայգ Սեֆերյան
Դեյվիդ և Նաիրի Կոլելո
Էլիզաբեթ Կինոսյան
Թալին Ղազարյան
Ռոբերտ Սեմոնյան
Պրն և տկն Արծոն Շեգոյան
Թինա Շաբանյան
Հիլդա Գրիգորյան
Լեոն Պալյան
Ռոբերտ Դեվոլշ
Մերի Օհանեսյան-Բեթթի
Ֆիլիլիս Վուդ
Արմինե Փափուչյան
Էլեն Դեվիս
Արթին Ասլանյան
Էլիզաբեթ Բեքն
Արչի Արփիարյան
Փոլ և Քարոլ Նիսոն
Ուիլյան և Նենսի Լևոնյան
Դոկտոր և տկն Չարլզ Գարաբեդյան
Գլեդիս Շեգոյան
Լինդա Բաբիկյան
Ջեյն Ուիլյամս
Ռոբերտ Միսգինիս

➢ ՀԱԲԻԹԱԹԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՏԱՐԵԼ

Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Գրեթեր Սինսինաթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Բերգընֆիլդ Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Միչիգան
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Փեթերսըն
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Դելվեր Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Կանադա
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ալփինա և հյուսիս-արևելյան Միչիգան

➢ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(կորպորատիվ, եկեղեցիներ, հիմնադրամներ և այլն)

ԱՄՆ ՄԶԳ
Վիշեգրադ միջազգային ֆոնդ
Սադա Սիսթեմս
Պարսեկյան հիմնադրամ
Հայ եկեղեցու նվիրատվության ֆոնդ
Արա և Էդմա Դումանյան հիմնադրամ
Ռաֆլս
Շվաբ նվիրատվություն
Սբ. Հովհաննես հայ առաքելական եկեղեցի
Սբ. Հակոբ հայկական եկեղեցի

➢ ԳԼՈԲԱԼ ՎԻԼԻՋ ԾՐԱԳՐԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

Սյու Մեթիսըն
Թոդ Մեթիսըն
Էն Արգըլ
Հենդի Արգըլ
Մերի Գինեբուհ
Դեյվիդ Մենք
Ռոբերտ Հեքոքս
Ռամադան Քուեն
Քրիլ Լուիս-Դրեյֆուս
Մորիս Լուիս-Դրեյֆուս
Հեդր Հանա
Անգուս Բեք
Ռութ Ագնյու

ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Գրեգ Ֆոսթեր՝
Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Փոխնախագահ, ՀՖՀԻ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակ

Լուցիա Պոպովսկա՝
Խորհրդի անդամ
Ծրագրերի տնօրեն, ՀՖՀԻ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակ

Քոնոր Հանան՝
Խորհրդի անդամ
Ծրագրերի զարգացման ղեկավար, ՀՖՀԻ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակ

ՀՖՀ Արմենիայի թիմ

Լուիզա Վարդանյան
Գործադիր տնօրեն

Կարինե Մաիլյան
Ծրագրերի տնօրեն

Աննա Փարադյան
Ֆինանսների և ադմինիստրատիվ հարցերով ղեկավար

Սեդա Արզումանյան
Ռեսուրսների զարգացման ղեկավար

Անդրե Օհանյան
Շինարարության և աղետների արձագանքման ղեկավար

Կարեն Ասատրյան
ԲԲՇԷԱԲ ծրագրի ղեկավար

Աննա Մաթևոսյան
Ծրագրերի պատասխանատու

Նաիրա Աբրահամյան
Գլոբալ վիլիջի և հանրության հետ կապերի համակարգող

Աննա Հովակիմյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԱՐԳԱՑՈՂ ԴԻՆԱՄԻԿԱՆ

2001թ. սկսած օժանդակություն ստացած ընտանիքների թվի գծապատկերը



ՀԱՎԵԼՎԱԾ

ԱԿԹ	Աղետների կառավարման թիմ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՌՆԱ	Աղետների ռիսկերի նվազեցում և արձագանքում
ԲԲՇԷԱԲ	Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում
ԲՈԱԾ	Բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ
ԵՀԹ	Երկրի հումանիտար թիմ
ԷԱ	էներգաարդյունավետություն
ՀՖՀ	Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա
ՀՖՀԻ	Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեյշնլ
ՄԱԿԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄՖՀ	Միկրոֆինանսական հաստատություն
ՇՏԱ	Շինարարության տեխնիկական աջակցություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՈՒՎԿ	Ունիվերսալ վարկային կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՖՄԿՈՒ	Ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում
ՖՀ	Ֆինանսական հաստատություն
ՖՏ	Ֆինանսական տարի

Աջակցեք մեզ՝ կառուցելու տներ, համայնքներ և հույս Հայաստանում

Հայաստանում դեռևս կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք շարունակում են ապրել աղքատ բնակարանային պայմաններում: Միացեք մեր նախաձեռնությանը՝ կառուցելու պայծառ ապագա պատշաճ բնակարանային պայմաններ տրամադրելու միջոցով: Դուք կարող եք դառնալ մեր առաքելության մասնիկը Ձեր ֆինանսական նվիրատվությունների և կամավորական աշխատանքի շնորհիվ: Ցանկացած չափի նվիրատվություն այսօր նշանակում է, որ շուտով մեկ այլ ընտանիք կկարողանա ապրել ապահով, պատշաճ և մատչելի կացարանում: Ձեռք ձեռքի տալով մենք միասին կարող ենք կոտրել աղքատության շղթան:

Կատարեք նվիրատվություն

Նվիրաբերեք այսօր և փոխեք ընտանիքների կյանքը: Եվս մեկ օր աղքատ բնակարանային պայմաններում ապրելը կարող է ճակատագրական լինել սերունդների համար:

Կատարեք նվիրատվություն առցանց՝

ԱՄՆ դոլար - *www.habitat.org/donate/armenia*
Եվրո - *www.habitatforhumanity.org.uk/donate/armenia*

Բանկային փոխանցում՝

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ, HSBC *Բանկ Հայաստան*
ՀՀ՝ 001-174127-001

Շնորհակալություն

Ձեռնարկի տպագրությանն աջակցել են.

Habitat for Humanity® Armenia

Visegrad Fund

www.visegradfund.org